ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N- 183- 21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «17» «05» 2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս Պետական մարմնի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Մարի Գրիգորյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՈՒան Ուեյ Գրուպ» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Մաթևոս Բարսեղյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), համաձայն «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի Պետական բյուջեի մասին» 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-489-Ն ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 5-ի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2021 թվականի ծրագիրը, 2021 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N104-Ա հրամանի (այսուհետ՝ Ծրագիր) N2 հավելվածի 4.2 ենթակետով նախատեսված **«Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացներին»** միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) իրականացումն ապահովելու նպատակով և համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2021 թվականի փետրվարի 10-ի N17-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի մարտի 23-ի արձանագրության՝ կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Միջոցառման իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված 1190 «Զբոսաշրջության զարգացման» ծրագրի 11002 «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» միջոցառմամբ նախատեսված մինչև 1400.0 (հազար չորս հարյուր) հազար ՀՀ դրամ գումար, Պայմանագրի՝ 2.1.2. կետով սահմանված հաշվետվության և

Հանձնաժողովի արձանագրության հիման վրա, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Միջոցառումն իրականացնել սույն Պայմանագրով սահմանված կարգով:
1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Միջոցառումը և ծախսերի նախահաշիվը ներկայացված են սույն Պայմանագրի համապատասխանաբար NN 1,2 և 3 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝
2.1.1 Կազմակերպությունից պահանջել Միջոցառումը կատարել Միջոցառմամբ սահմանված ժամկետներում.
2.1.2 Կազմակերպությունից պահանջել Միջոցառման կատարման համար Հայաստանի Հանրապետության Պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 և տեքստային) եռամսյակային հաշվետվություններ, (այսուհետ՝ Հաշվետվություն), յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.
2.1.3 ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
2.1.4 Միջոցառմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը.
2.1.5 առանց իրականացված Միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառման իրականացման ժամկետները (Միջոցառման իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումը չի համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին.

2.1.6 սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառման արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները.

2.2.3.Նախատեսված յուրաքանչյուր Միջոցառման ավարտից հետո ներկայացնել Հաշվետվություն:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 Միջոցառմամբ նախատեսված դեպքում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2 կատարել Միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ Պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3 իրականացնել Միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4 իրականացված Միջոցառման մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել Միջոցառման շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառման և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակով.

2.4.3 կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմնին ներկայացնել Միջոցառման իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ավարտից հետո՝ ամփոփ Հաշվետվություն.

2.4.5 սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Պետական մարմնի կողմից Միջոցառման իրականացման մասին Հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
2.4.8 Սույն Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները / վերադարձնել բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառման առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Կազմակերպությանը վճարումները կատարվում են Միջոցառման իրականացման վերաբերյալ հաշվետվությունն Պետական մարմնի կողմից ընդունվելու (իրականացված աշխատանքների հանձնման - ընդունման համապատասխան ակտի (ձև 1-ը կցվում է) օրվան հաջորդող 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում իրականացվելիք Միջոցառումների որակի և Պայմանագրով նախատեսված ժամկետների պահպանման համար:
5.2 Կազմակերպության կողմից Պայմանագրով նախատեսված իրականացվելիք Միջոցառումների ժամկետների խախտման դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ իրականացվելիք Միջոցառման ենթակա, սակայն չիրականացված գնի 0,05 (զրո

ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.3 Պայմանագրի 1.2 կետում նշված Միջոցառումներին չհամապատասխանելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև իրականացվելիք Միջոցառումը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից այդ չընդունվելու դեպքում: ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կազմակերպության վճարման ենթակա գումարներից:

5.5.Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը:

7.Վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող Կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պետական մարմինը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.2. Պայմանագիր կնքած կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած Կազմակերպությունը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև Պայմանագիր կնքած կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, ձև 1-ից և հետևյալ հավելվածներից, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը.

Ձև 1 – ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ,

Հավելված N 1 –ՄԻՋՈՑԱՌՈՒՄ,

Հավելված N2– ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հավելված N3 – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ:

9.4 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
9.5 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, 11 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
9.6 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե Հասցեն 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900011010379 ՀՎՀՀ 02698604	«ՈՒան Ուեյ Գրուպ» ՍՊԸ Հասցեն ՀՀ ք. Երևան, Փարպեցի 16/1 «Ինեկոբանկ» ՓԲԸ h/h 2050022565141001 ՀՎՀՀ 02819852
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Մարի Գրիգորյան --- Կ.Տ.	Տնօրեն Մաթևոս Բարսեղյան --- Կ.Տ.

Ձև 1
Հաստատում եմ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Զբոսաշրջության կոմիտեի նախագահ

ԱԿՏ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի և ---------- միջև «----------» «----------» 2021 թվականի կնքված N ---------- Պայմանագրի շրջանակներում 2021 թվականի «----------» դրությամբ կազմակերպության կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները.

N	անվանումը	Չափի միավորը	Քանակական ցուցանիշներ		Արժեքը հազար դրամ	
			նախատեսված	փաստացի	նախատեսված	փաստացի
1						
2						
	Ընդամենը՝					

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված Պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքն հանձնեց՝

_____
ստորագրություն

Աշխատանքն ընդունեց՝

_____
ստորագրություն

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____ստորագրություն

Հավելված 1
2021 թ. ----05----17----ին
Պետական մարմնի և Կազմակերպության միջև
կնքված N պայմանագրի
183-21

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ

Իրականացվելիք միջոցառում					
անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա ժամկետ ը	պահան ջվող գումար ը (հազ.դրամ)
2.	3.	4.	5.	6.	7.
Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին՝ «Ուան Ուեյ Գրուպ» ՍՊԸ	Միջոցառումը հնարավորություն կտա զբոսավարներին երկամսյա ժամանակահատվածում ստանալ զբոսավարի աշխատանքում անհրաժեշտ լրացուցիչ գիտելիքներ: Դասընթացի ընթացքում կդասավանդվեն հետևյալ թեմաները. 1.Հայաստանի հնագիտություն 2.Հայ ազգագրություն 3.Հայ զինանշանագիտություն	Դասընթացը կտևի 2 ամիս՝ 24 հանդիպումներով (յուրաքանչյուր ամիս՝ 12 հանդիպում), որոնք կանցկացվեն հայերեն լեզվով, շաբաթական 3 օր, 2 ժամ տևողությամբ: Դասընթացը կանցկացվի տեսական և գործնական ձևաչափով. առարկաների մեծ մասը կանցկացվեն տեսական, իսկ որոշ մասը նաև գործնական պայմաններում: Տեսական դասերը կանցկացվեն հարմարավետ լսարանում՝ ապահոված անհրաժեշտ բոլոր հարմարություններով և դիդակտիկ նյութերի ներկայացմամբ, իսկ մի շարք առարկաներ («Հայ վիմագրություն», «Բացօթյա հանգստի կենսաբանական սպառնալիքները», «Առաջին	Ակնկալվող արդյունքներն են՝ 1.Իրականացված տեսական և գործնական դասընթացներ (2 ամիս՝ 24 հանդիպում) 2. առնվազն 24 վերապատրաստված մասնագետ: Դասընթացները կնպաստեն Հայաստանում գործունեություն իրականացնող որակյալ	2021թ. սեպտեմբեր-հոկտեմբեր	1400,0

	4.Հայ վիմագրություն 5.Հայ ձեռագրագիտություն 6.Զբոսաշրջիկի հոգեբանություն Դասընթացին մասնակցելու են այն զբոսավարները, որոնք վերջին 3 տարիների ընթացքում ընդհանուր 6 ամիս աշխատել են որպես զբոսավար:	օգնություն») կիրագործվեն նաև բացօթյա պայմաններում՝ գործնական աշխատանքի կիրառմամբ: Դասընթացի ընթացքում մասնակիցներին տրամադրվու է օնլայն հարթակի մուտքի իրավասություն, որտեղ տեղադրված են լինելու դասընթացի ուղեցույց-ձեռնարկ և այլ անհրաժեշտ նյութեր: Դասընթացի մասնակիցներին հանձնարարվելու են տնային առաջադրանքներ, որոնք նույնպես կազմելու են դասընթացի ուղեցույց-ձեռնարկին կից նյութերի անբաժան մասը: Դասընթացի ընթացքում նաև ներկայացվելու են փաստագրական ֆիլմեր,ինչպես նաև որպես ներկայացված նյութի միջանկյալ ամփոփում մասնակիցներին տրամադրվելու են ստուգիչ հարցեր պարունակող նյութեր: Դասընթացի ավարտին քննական անձնակազմի կողմից կիրականացվի դասընթացի մասնակիցների քննություն՝ գրավոր թեսթավորման միջոցով և բանավոր՝ հարցաթերթիկների միջոցով , ինչպես նաև կտրամադրվեն սերտիֆիկատներ:	ծառայություններ մատուցող զբոսավարների քանակի ընդլայնմանը:		
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ			«Ուան Ուեյ Գրուպ» ՍՊԸ տնօրեն ՄԱԹԵՎՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ		

Հավելված 2
2021 թ. ----05----17----ին
Պետական մարմնի և Կազմակերպության միջև

կնքված N պայմանագրի
173-21

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

(հազար դրամ)

	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	չափման միավոր	քանակ	միավորի գին	Գումար
	Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին «Ուան Ուեյ Գրուպ» ՍՊԸ 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներ (01.09.-.31.10.21թ.)				
	Զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացի իրականացման ապահովում, այդ թվում՝				
1	Ներգրավված դասավանդող մասնագետներ	ամիս	2	282,0	564,0
2	Դասավանդման տարածքի վարձակալություն	ամիս	2	90,0	180,0
3	Ծրագրի պատասխանատու/ համակարգող	ամիս	2	100,0	200,0
4	Դասընթացի մասնակիցների համար նախատեսված հատուկ տուրեր՝ առնվազն 24 մասնակիցների համար	անգամ	3	144,0	432,0
5	Տետրեր, գրիչներ, տպագրական նյութեր, սերտիֆիկատներ	փաթեթ	24	1,0	24,0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝				1400,0

	ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	«Ուան Ուեյ Գրուպ» ՍՊԸ տնօրեն ՄԱԹԵՎՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված N3
2021թ. 05 17 -ի կնքված
N 183-21 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծրագրի անվանումը՝ **Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին**

(հազար դրամ)

...ք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (աճողական)												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին՝ «Ուան Ուեյ Գրուպ» ՍՊԸ	4639	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1,400.0	1,400.0	1,400.0	1,400.0	1,400.0
Ընդամենը՝		**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**1,400.0**	**1,400.0**	**1,400.0**	**1,400.0**	**1,400.0**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե
Հասցեն
0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հ/հ 900011010379
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
Մարի Գրիգորյան

Կազմակերպություն

«ՈՒան Ուեյ Գրուպ» ՍՊԸ
Հասցեն
ՀՀ ք. Երևան, Փարպեցի 16/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 2050022565141001
ՀՎՀՀ 02819852

Տնօրեն
Մաթևոս Բարսեղյան